

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՑԻ ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀՀ ՀՆՏՐԱԿԱՆ
ՕՐԵՆՍԳՐքԻ 23-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ, 24-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ, 38-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ
7-ՐԴ ՄԱՍԻ, 79-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 80-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍ-
ԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

5 մարտի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալյայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի,
Ա. Խաչարյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Ռ. Նազարյանի (զեկուցող),
Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող Ն. Մկրտչյանի, նրա ներկայացուցիչ S. Սարգսյանի,

գործով որպես պարագանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշ-
փոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխարհակազմի իրավաբա-
նական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ
Ս. Համբարձումյանի եւ նույն բաժնի առաջարար մասնագետ Ռ. Սարդարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդ-
վածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25,
38 եւ 69-րդ հոդվածների,

դրսաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Նարինե
Մկրտչյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ ընդունական օրենսգրքի 23-րդ հոդվածի 3-րդ

մասի, 24-րդ հոդվածի, 38-րդ հոդվածի 7-րդ մասի, 79-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի և 80-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ն. Մկրտչյանի՝ 30.01.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուգրագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողների գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացարձությունները, հետազոտելով Հայաստանի Հանրապետության ընդունական օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. ՀՀ ընդունական օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2011թ. մայիսի 26-ին, ՀՀ Նախագահի կողմից սպորագրվել՝ 2011թ. հունիսի 14-ին և ուժի մեջ է մտել 2011թ. հունիսի 26-ին:

Սույն գործով վիճարկվող նորմերը համապատասխանաբար սահմանում են.

օրենսգրքի՝ «Ընդունական կազմակերպման և անցկացման ֆինանսավորումը» վերլառությամբ 23-րդ հոդվածի 3-րդ մասում.

«3. Եթե բյուջեփային միջոցները ժամանակին չեն փրամադրվում, կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պահուստային ֆոնդում միջոցներ չկան, կամ փրամադրված միջոցները չեն բավարարում ընդունական կամ ընդունական կազմակերպությունների գործության համար, ապա կենտրոնական ընդունական հանձնաժողովն իրավունք ունի մրցութային հիմունքներով վարկ սպանալու մասնավոր բանկերից կամ օգտագործելու կենտրոնական ընդունական հանձնաժողովի՝ ընդունական գրավների հարցում հաշվեհամարում առկա միջոցները: Վարկը կամ ընդունական գրավների հարցում հաշվեհամարից օգտագործված միջոցները կառավարությունը եռամսյա ժամկետում վերականգնում է».

օրենսգրքի՝ «Ընդունական գրավը» վերլառությամբ 24-րդ հոդվածում.

«1. Թեկնածուները, համամասնական ընդունական հանձնաժողով կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները կենտրոնական ընդունական հանձնաժողովի հաշվեհամարին վճարում են ընդունական գրավ:

2. Ընդունական գրավի գումարը դիմումը սպանալուց հետո՝ յոթնօրյա ժամկետում, վերադարձվում է՝

1) ընդրվելու կամ համամասնական ընդրակարգով մանդապների բաշխմանը մասնակցելու,

2) թեկնածուներին կողմ քվեարկված քվեաթերթիկների թվի 5 կամ 5-ից ավելի փոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ սպանալու,

3) մինչեւ թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընդրական ցուցակների գրանցումն ինքնաբացարկ ներկայացնելու,

4) ընդրության արդյունքներն անվավեր ճանաչվելու և նոր ընդրություն նշանակվելու դեպքերում եւ.

5) ժառանգներին՝ թեկնածուի մահվան դեպքում:

Մյուս բոլոր դեպքերում ընդրական գրավի գումարը չի վերադարձվում».

օրենսգրքի՝ «Ընդրական հանձնաժողովների ֆինանսավորումը, ընդրական հանձնաժողովների անդամների վարձագրությունը» վերպառությամբ 38-րդ հոդվածի 7-րդ մասում.

«7. Կենդրոնական ընդրական հանձնաժողովի՝ ընդրական գրավների հափուկ հաշվեհամարում առկա միջոցների մինչեւ 15 փոկոսը՝ յուրաքանչյուր դարձակ համար կենդրոնական ընդրական հանձնաժողովի որոշմամբ հասպատված նախահաշվին համապատասխան, կարող է օգտագործվել ընդրական վարչարարության փորձի ուսումնասիրման, ընդրական վարչարարության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացման, ընդրական հանձնաժողովների գումարների վերագինման եւ ընդրական օրենսդրությանը վերաբերող նյութերի պարտասպանման եւ հրապարակման համար:»

Կենդրոնական ընդրական հանձնաժողովի՝ ընդրական գրավների հափուկ հաշվեհամարում մնացած մյուս միջոցները Նայասպանի Նանրապետության կառավարության որոշմամբ կարող են օգտագործվել ընդրական հանձնաժողովների գումարների վերագինման եւ ընդրական օրենսդրությանը վերաբերող նյութերի պարտասպանման եւ հրապարակման համար».

օրենսգրքի՝ «Նանրապետության Նախագահի թեկնածուի առաջադրումը» վերպառությամբ 79-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կերպում.

«2) ընդրական գրավի վճարման անդորրագիրը».

օրենսգրքի՝ «Նանրապետության Նախագահի թեկնածուի ընդրական գրավը» վերպառությամբ 80-րդ հոդվածում.

«Հանրապետության Նախագահի թեկնածուները Հայաստանի Հանրապետության կենդրոնական բանկում բացված կենդրոնական ընդունական հանձնաժողովի հաշվեհամարին վճարում են ընդունական գրավ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվարկային նվազագույն աշխատավարձի (այսուհետ՝ նվազագույն աշխատավարձ) 8000-ապագիկի չափով»:

2. Գործի դադարական նախապարմությունը հանգում է հետևյալին: ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի համաձայն՝ 2013թ. փետրվարի 18-ին նշանակված էին ՀՀ Նախագահի ընդունական ներկայացուցչի միջոցով 2012թ. դեկտեմբերի 29-ին ՀՀ ընդունական օրենսգրքի 79-րդ հոդվածի համաձայն ՀՀ կենդրոնական ընդունական հանձնաժողով է ներկայացրել առաջադրման փաստաթղթերը՝ դիմում առաջադրման մասին (վավերացված նույնական կարգով), լիազոր ներկայացուցչի փվյալները, դեղեկանք թեկնածուի՝ վերջին փասը փարում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու, այլ պետության քաղաքացիություն չունենալու եւ վերջին փասը փարում Հայաստանի Հանրապետությունում մշղապես բնակվելու մասին, թեկնածուի անձը հասպարող փաստաթղթի պարճենը: Չի ներկայացվել ՀՀ ընդունական օրենսգրքի 79-րդ հոդվածով սահմանված ընդունական գրավի վճարման անդորրագիրը:

ՀՀ կենդրոնական ընդունական հանձնաժողովն ընդունել է վերոհիշյալ փաստաթղթերը եւ 2013թ. հունվարի 8-ին գումարված իր նիստում, դեկանական կայացրել է թիվ 4-Ա որոշումը՝ դիմողի դիմումին կից ներկայացված փաստաթղթերը լրացնելու, այն Է՝ ՀՀ ընդունական օրենսգրքի 80-րդ հոդվածով սահմանված նվազագույն աշխատավարձի ութիազարապարփիկի չափով ընդունական գրավի վճարման անդորրագրով լրացնելու համար քառատունութ ժամ ժամանակ դադարական գրավում մասին: Նշված ժամանակահավածում դիմողն ընդունական գրավի վճարման անդորրագիր չի ներկայացրել: 2013թ. հունվարի 14-ին հանձնաժողովը, իիմք ընդունելով ՀՀ ընդունական օրենսգրքի 79, 80 եւ 82-րդ հոդվածների դրույթները, կայացրել է 22-Ա որոշումը, որով մերժել է դիմումի գրանցումը որպես Հանրապետության Նախագահի թեկնածու:

Դիմողը 2013թ. հունվարի 17-ին, դեկանական կարգության օրենսգրքի 143-րդ եւ 146-րդ հոդվածներով, ՀՀ ԿԸՆ թիվ 22-Ա որոշումը բողոքարկել է ՀՀ վարչական դադարական: Վերջինս, դեկանական կարգության օրենսգրքի 112-114-րդ, 150-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական

դարպավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով, մերժել է հայցը: Քանի որ ՀՀ վարչական դարպավարության օրենսգրքի 150-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ընդուրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերով վարչական դարպարանի՝ գործն ըստ էռության լուծող դարպական ակդեքը վերջնական են, վերանայման ենթակա չեն եւ ուժի մեջ են մտնում իրապարակման պահից, Ն. Մկրտչյանը դիմել է ՀՀ սահմանադրական դարպարան:

3. Դիմողը գիտում է, որ իր նկարմամբ կիրառված ՀՀ ընդուրական օրենսգրքի 24-րդ եւ 80-րդ հոդվածները, 79-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետը, ինչպես նաև 23-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «կամ օգտագործելու կենդրոնական ընդուրական հանձնաժողովի՝ ընդուրական գրավների հարուկ հաշվեհամարում առկա միջոցները» բառերը, 38-րդ հոդվածի 7-րդ մասը հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6, 14.1. եւ 50-րդ հոդվածներին՝ հետեւյալ հիմնավորումներով:

Դիմողի կարծիքով, ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածով սահմանվում է Սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժ ունենալու եւ դրա նորմերի անմիջականորեն գործելու, ինչպես նաև օրենքների նկարմամբ միջազգային պայմանագրերի գերակայության սկզբունքը, ինչից բխում է, որ Սահմանադրության 14.1-րդ եւ 50-րդ հոդվածներով սահմանված դրույթները պետք է գործեն անմիջականորեն: Բացի դրանից, ՀՀ ընդուրական օրենսգրքի հիշյալ դրույթները հակասում են օրենքի նկարմամբ գերակա ուժ ունեցող ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդիանուր հոչակագրին: Դիմումը գիտում է, որ Սահմանադրության 50-րդ հոդվածը սահմանում է Հանրապետության Նախագահ ընդրվելու համար նախագետական չափորոշիչները եւ չի նախագետական որեւէ այլ արգելք, գրավ, գումարային կամ այլ սահմանափակումներ: Ավելին, ՀՀ ընդուրական օրենսգրքի 82-րդ հոդվածը որպես թեկնածուի գրանցումը մերժելու հիմքերից մեկն է դիմում հենց Սահմանադրությամբ նախագետական սահմանափակումները: Այսպիսով, դիմումի կարծիքով, վիճարկվող դրույթները պարունակում են Սահմանադրությամբ չնախագետական լրացուցիչ սահմանափակումներ, ինչը հակասում է ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածի դրույթներին:

Ըստ դիմումի՝ այդ դրույթները հակասում են նաև Սահմանադրության 14.1-րդ հոդվածի դրույթներին, քանզի թեկնածուին ուղղակիորեն ֆինանսական (գվայլ դեպքում՝ գրավի գետաքով) պահանջի ներկայացումը, ըստ էռության, պայմանավորում է թեկնածուի գրանցումը նրա գույքային դրույթյամբ եւ խորական մոդեւցում է կիրառում

հնարավոր թեկնածուների միջև: Դիմողը նշում է, որ ճիշդ է, թեև ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածով սահմանվում է, որ Նանրապետության Նախագահն ընդունում է Սահմանադրությամբ եւ օրենքով սահմանված կարգով, սակայն այսպես կարեւոր է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ թեկնածուից ոչ թե պահանջվում է որոշակի ժամկետում հանգամանքել որոշակի թվով ընդունելուց որոշակի գումար կամ ներկայացնել որոշակի քանակությամբ սպորագրություններ, կամ գործոդությունների որեւէ այլ հաջորդականությամբ եւ արդյունքով հիմնավորել իր առաջադրման հիմնավորվածությունը եւ թեկնածության լրջությունը, այլ պարզապես պահանջվում է վճարել նվազագույն աշխատավարձի 8000-ապարիկի չափով ընդունական գրավ եւ ՀՀ կենդանական ընդունական հանձնաժողով ներկայացնել վճարման անդորրագիր, ինչը թեկնածուին ներկայացվող նույնպիսի պահանջ է (եւ ոչ ընդության կարգի բաղկացուցիչ), ինչպիսին վերջին 10 տարվա ընթացքում ՀՀ քաղաքացի հանդիսանալու եւ ՀՀ-ում մշգրավես բնակվելու մասին գեղեկանքի ներկայացումն է կամ անձնագրի պատճենի ներկայացումը՝ թեկնածուի իրական դարիքը պարզելու համար: Դիմողի պնդմամբ, ինքնառաջադրման պարագայում թեկնածուն գրկված է իր ընդունելու հնարավորությունները գնահատելու որեւէ էմպիրիկ եւ շոշափելի հնարավորությունից:

Դիմողի կարծիքով, պեսք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ՀՀ ընդունական օրենսգրքի 78-րդ հոդվածը որպես առաջադրման ձեւերից մեկն է սահմանում ինքնառաջադրումը, ինչը ենթադրում է, որ քաղաքացին առաջադրվում է իր ցանկությամբ, այլ ոչ թե ընդունելու նախաձեռնությամբ կամ որոշմամբ: Այդ առումով ընդունական գրավի 8 միլիոն դրամ սահմանված չափն ինքնին վերածվում է գույքային ցենզի, քանի որ, համաձայն «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ-ում նվազագույն ամսական աշխատավարձը սահմանված է երեսունինազ հազար ՀՀ դրամի չափով, իսկ միջին աշխատավարձը, ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության, կազմում է 114000 ՀՀ դրամ, ինչը փաստացի անհնարին է դարձնում մեծ նյութական կարողությունների չփիրապես անձանց առաջադրումը՝ անկախ իրենց քաղաքական ակդիվությունից կամ վարկանիշից: Դիմոդը գիտնում է, որ համաձայն ՀՀ ընդունական օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Ընդուները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ընդունելու եւ ընդունելու իրավունք ունեն» դրույթը, որպես ընդունելու ների հիմունքներից մեկը, եւս ամրագրում է ընդունելու եւ ընդունելու իրավունքը՝ անկախ անձի գույքային

վիճակից, ուստի ՀՀ ընդունական օրենսգրքի վիճարկվող դրույթները չեն բխում նաև ՀՀ ընդունական համակարգի հիմունքներից:

Դիմուլը գրնում է, որ Սահմանադրության հիշապակվող հոդվածները ներառված չեն Սահմանադրության 43-րդ հոդվածով նախադասկած օրենքով սահմանափակման ենթակա իրավունքների ցանկում:

Սահմանադրական դադարան ներկայացրած իր բացադրությունում՝ կապված ընդունական գրավի ինսպիրուատիվի իրավաչափի լինելու, սպորագրահավաքի, ինչպես նաև գրավի չափի վերաբերյալ պարասխանող կողմի դիրքորոշումների եւ բերված փաստարկների հետ, դիմող կողմը շարադրում է իր մոքեցումները Հայաստանի Հանրապետության ընդունական օրենսգրքի, ինչպես նաև Ղրղզստանի Հանրապետության ընդունական օրենսգրքի նախագծի վերաբերյալ Եվրախորհրդի Վենեգիկի հանձնաժողովի եւ ժողովրդավարական հաստիքությունների ու Մարդու իրավունքների ԵԱՀԿ գրասենյակի համագեղ եզրակացությունների, Մարդու իրավունքների եվրոպական դադարանի նախադեպային իրավունքի եւ միջազգային այլ փորձի վերաբերյալ:

4. Պարասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկներին, գրնում է, որ ՀՀ ընդունական օրենսգրքի վիճարկվող դրույթները համապարասխանում են ՀՀ Սահմանադրությանը՝ հետեւյալ հիմնավորումներով:

Ընդունական գրավը դրամական գումար է, որը վճարվում է որոշ ընդունական պաշտոններում որպես թեկնածու առաջադրվելիս: Ընդունական գրավը, որպես կանոն, չի վերադարձվում այն դեպքում, եթե թեկնածուն ընդունական արդյունքում չի սպանում ընդունական ծայների օրենքով սահմանված նվազագույն քանակություն: Այն իրենից ներկայացնում է թեկնածուի գրանցման պայման եւ հանդես է գալիս որպես ընդունական ծեսական թեկնածուներից զերծ պահելու լրացուցիչ միջոց:

Հայաստանի Հանրապետությունում ընդունական գրավը կիրառվում է ինչպես Հանրապետության Նախագահի, այնպես էլ ՀՀ Ազգային ժողովի եւ գլուխական ինքնակառավարման մարմինների ընդունական ժամանակակից ժամանակակից ժամանակ:

Ըստ պարասխանող կողմի՝ ընդունական գրավի ինսպիրուատիվը չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրության 6, 14.1. եւ 50-րդ հոդվածներին հակասող, թեև ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածով կարգավորվում են ՀՀ քաղաքացիների կողմից Հանրապետության Նախագահ ընդունական, Հանրապետության Նախագահի լիազորությունների ժամկետի, Հանրապետության Նախագահի թեկնածուներին առա-

ջաղրվող պահանջների, նոր կամ արդահերթ ընդրությունների կարգի հետ կապված հարաբերությունները, արդուիանդերձ, ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի համաձայն՝ «Նանրապեսության Նախագահն ընդրվում է Սահմանադրությամբ եւ օրենքով սահմանված կարգով»:

Ըստ պարասիստանողի՝ Սահմանադրությունը հասարակության իրավական համակարգի միջուկն է, այն սահմանում է հիմնարար իրավական դրույթներ, որոնք համարվում են ելակեփային եւ որոշիչ իրավունքի առանձին ճյուղերի համար: Սահմանադրությունը կարգավորում է հասարակական կյանքի վարքեր ոլորսները կազմող առավել կարեւոր, հիմնարար, առանցքային հասարակական հարաբերությունները: Ընդրական իրավունքը եւս բացառություն չի կազմում: Նանրապեսության Նախագահի ընդրության կարգի առնչությամբ ՀՀ Սահմանադրության՝ «Նանրապեսության Նախագահը» վերառությամբ 3-րդ գլխով կարգավորվում են Նանրապեսության Նախագահի լիազորությունների ժամկեփի, ընդրությունների անցկացման ժամկեփի, Նախագահ ընդրվելու համար անհրաժեշտ ձայների քանակի, ընդրությունների երկրորդ փուլի անցկացման պայմանների, նոր կամ արդահերթ ընդրություն անցկացնելու հիմքերի եւ ժամկեփների հետ կապված հարցեր:

Պարասիստանողը նաև գրնում է, որ ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածը սահմանում է Նանրապեսության Նախագահի թեկնածուին առաջադրվող պահանջները, իսկ 51-րդ հոդվածը սահմանում է Նանրապեսության Նախագահի ընդրություն անցկացնելու ժամկեփները, ընդրվելու նախապայմանները եւ դրանց առնչվող այլ հարաբերություններ, որոնք կարգավորվում են օրենքով եւ կոնկրետացված են ՀՀ ընդրական օրենսգրքում: Այսինքն՝ Նանրապեսության Նախագահի ընդրության կարգին վերաբերող մնացած հարցերի, այդ թվում՝ թեկնածուների առաջադրման, գրանցման ընթացակարգերի իրավական կարգավորումն իրականացվում է օրենքով՝ ՀՀ ընդրական օրենսգրքով: Առերեւույթ, ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածը, ընդրական գրավ վճարելու պայման չներառելով, կարծես թե սպեղծում է մի իրավիճակ՝ իբրեւ ընդրական գրավ վճարելը պարփառիր չէ: Մինչդեռ, ըստ պարասիստանողի՝ ՀՀ Սահմանադրությունը բաղկացած չէ մեկ հոդվածից, եւ ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Նանրապեսության Նախագահն ընդրվում է Սահմանադրությամբ եւ օրենքով սահմանված կարգով»: Մասնավորապես, ՀՀ ընդրական օրենսգրքի 79 եւ 80-րդ հոդվածներով սահմանված ընդրական գրավը, ինչպես նաև թեկնածուների առաջադրման, գրանցման ընթացակարգերը հանդիսանում են ընդրական կարգի բաղադրիչ՝ որպիսի կարգով է

պետք է իրականացվի առաջադրումը, ինչ փասբաթղթերի ներկայացմամբ եւ այլն: Այդպիսով, ընդունական գործընթացը դիմումը իրեւ պարփակիր կարգով միմյանց հաշորող փուլերի ամբողջություն:

Պարասխանող կողմն իր հիմնավորումներում վկայակոչում է նաև միջազգային փորձը հիմնահարցի վերաբերյալ:

5. ՀՀ սահմանադրական դարպարանն արձանագրում է, որ սահմանադրաբարական վեճի առարկան առաջին հերթին ընդունական գրավի ինսպիրուտիվի սահմանադրականության հարցն է եւ ընդունական գրավի մեծության համաչափությունն իրավաչափ նպարակին: Մնացած բոլոր հարցադրումները, ինչպես վկայում է նաև դիմողը, ածանցյալ բնույթ ունեն այս հիմնահարցերից: Ուստի անհրաժեշտ է առաջին հերթին բացահայտել ընդունական ինսպիրուտիվի սահմանադրաբարական բովանդակությունը եւ օրենքի հիման վրա դրա կիրառման իրավաչափությունը:

6. Ինչպես վկայում է միջազգային իրավական պրակտիկան, ներկայացուցչական ժողովության իրականացման համար ելակետային նշանակություն ունեցող հանգամանքներ են թե՛ ընդունական իրավունքի ճանաչումը եւ երաշխավորումը եւ թե՛ այնպիսի ընդունակարգի սահմանումը, երբ թեկնածուի ընդունակարգի կարգում է ոչ թե պարահականորեն, ինչը կարող է վրանգել հանրային շահը, այլ հանրային աջակցության որոշակի երաշխիքների առկայության պայմաններում:

Եթե առաջին խնդիրը լուծվում է անձի ընդունական իրավունքի ճանաչման եւ սահմանադրության ամրագրման միջոցով, ապա երկրորդ խնդիրի լուծումն օրենսդրական կանոնակարգման առարկա է եւ, որպես կանոն, օրենսդիր մարմնի հայեցողության շրջանակներում է լուծվում:

Միջազգային փորձը նաև վկայում է, որ երկրորդ խնդիրի լուծման ընդունելի ու լայն գործածում գրած միջոցները երկուսն են՝ որոշակի թվով նախնական սպորագրահավաքի միջոցով ընդունական գանկացողի նկարմամբ հանրային վստահության նվազագույն շեմի ապահովումը կամ նույն նպարակով՝ ընդունական գանկացողի միջոցով: Այս հարցում եվլուպական երկրների համար ելակետ են ընդունվում Եվրախորհրդի Վենեգիկի հանձնաժողովը 30 հոկտեմբերի 2002թ. CDL-AD(2002)023rev «Ընդունական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրը, ցուցումներ եւ բացադրական գեկույց» փասբաթղթում ամրագրված մոդելումները: Վերջինիս 1.3 /թեկնածուների առաջադրում/ կերպով, մասնավորապես, փասբվում է, որ «Անհավական թեկնածությունների

կամ թեկնածուների ցուցակների ներկայացումը կարող է ենթակա լինել սպորտագրությունների նվազագույն քանակի հավաքագրման պահանջին»: Ապա շեշտված է նաև. «Եթե կանխավճար է պահանջվում, ապա թեկնածուի կամ կուսակցության կողմից որոշակի միավորների հավաքագրման դեպքում այն պետք է փոխհարուցվի: Պահանջվող գումարը եւ միավորները չպետք է լինեն չափազանց մեծ»:

Այսպես եականն այն է, որ նշված պահանջները չեն դիմումակիվում որպես թեկնածուի ընդունական իրավունքի ճանաչման բաղադրաբարբ, ինչն ակնարկում է դիմողը, այլ այդ պայմաններն ընդունակարգի այնպիսի բարբեր են, որոնք անհրաժեշտ են անհարիստ ու հանրության շահերը ներդաշնակելու եւ ընդունական գործընթացն իր նպարակին ծառայեցնելու համար: Նման ընդունակարգն առաջին հերթին ակդիվ ընդունական իրավունքի իրացման կարեւոր բաղադրաբարբ է՝ նկատի ունենալով ընդունակարի կողմից իրենց ժողովրդաշխանական լիազորությունների պարզվիրակման ժամանակ այն սուբյեկտի ճիշտ ընդունակությունը, որին պարվիրակվում է դրանց իրացումը: Ժողովրդաշխանության սկզբունքի իրավաչափ իրացման համար ոչ միայն կարեւոր է պետքության նախագահ դառնալ ցանկացողի սուբյեկտիվ կամքն ու ընդունակությունը, այլև հանրային-քաղաքական նման գործառույթ իրականացնելու համար հայր ներկայացնողի պարասիանագության ու կարողունակության վերաբերյալ ժողովրդի նախնական վսփահության որոշակի (կամ նվազագույն) ասդիմանը: Իսկ դա, որպես կանոն, որոշվում է վերոնշյալ երկու ինսդիվուտների միջոցով՝ թույլ չփալով նաև ընդունական իրավունքի չարաշահում, ինչն առանձնապես կարեւոր է համապետական ընդունակությունների դեպքում: Միշագգային պրակտիկայում դա նաև ընդունված է անվանել, այսպես կոչված, «նախնական վսփահության» միջոց:

7. ՌՌ սահմանադրական դադարանը կարեւորում է նաև նույն փաստաթղթում բերված բացաբրություններն ընդունակարավի ինսդիվուտի վերաբերյալ: Այսպես, բացաբրական գեկույցի 8-րդ մասում նախ շեշտվում է, որ «Ընդունակություններին առաջադրվելու համար սպորտագրությունների որոշակի քանակ հավաքագրելու պարագավորությունը գեսականորեն համապետելի է համընդհանուր ընդունական իրավունքի սկզբունքի հետ»: Իսկ 9-րդ մասում հետեւություն է արվում, որ «Գոյություն ունի մեկ այլ ընթացակարգ, երբ թեկնածուները կամ կուսակցությունները պետք է կանխավճար ներդնեն, որը կիրարակության միայն, եթե դա դաշտավայրում կամ կուսակցությունը հավաքի ձայների նախաբեսված դաշտում ավելին: Այդօրինակ

գործընթացներն ավելի արդյունավետ են, քան սպորագրությունների հավաքագրում»:

Կարգարված ընդգծումները հարակեցնում են երկու կարեւոր հանգամանք: Նախ՝ սպորագրահավաքը եւ ընդրական գրավը ոչ այլ ինչ են, քան ընդրությունների ընթացակարգի բաղադրաբարբ: Երկրորդ՝ նախապարփությունը դրվում է ընդրական գրավի ինսպիրութիւն:

Այս մոփեցումներն են հիմք հանդիսացել Հայաստանում ընդրողների սպորագրահավաքի ինսպիրութիւն հրաժարվելու համար: Դրա մասին են վկայում նաև ՀՀ ընդրական օրենսգրքի բարեփոխումների վերաբերյալ Եվրախորհրդի Վենեփիկի հանձնաժողովի CDL(2011)020 եւ CDL(2011)081 փաստաթղթերի ուսումնասիրությունը:

Ընդրագրավի ինսպիրութիւն սահմանադրախրավական բովանդակությունն աղճակվում է, եթք այն չի դիմում իրավակարգավորման ամբողջականության մեջ: Այդ ինսպիրութիւնը եւ ընդրողների երաշխավորական վսպահության միջեւ փոխկապվածությունը, որպես ժողովրդախիսանության իրականացման կարեւոր բաղադրաբարբ, դրսեւորվում է նաև այդ գրավի վերադարձնելիության հավուկ կարգի սահմանման միջոցով: Օրինակ՝ ՀՀ ընդրական օրենսգրքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կեպով սահմանված է, որ ընդրական գրավը վերադարձվում է թեկնածուին կողմ քվեարկված քվեաթերթիկների թվի 5 կամ 5-ից ավելի գույքու կողմ քվեարկված քվեաթերթիկներ սպանալու դեպքում: Ակնհայտ է, որ ընդրագրավը ոչ թե թեկնածուի ունեցվածքի գնահարման միջոց է կամ պասիվ ընդրական իրավունքի ճանաչման ցենզ, այլ որոշակի թվով ընդրողների վսպահության երաշխիք Է՝ նրանցից պետական իշխանության կրողի մանդապ հայցելու ու այդ նվազագույն վսպահությունն ու անհրաժեշտ պարասխանարվությունը նախապես ունեցող կամ ակնկալող այլ թեկնածուների հետ ընդրական մրցակցությանը մասնակցելու համար: Յուրաքանչյուր թեկնածու, ով օբյեկտիվորեն է գնահարում իր հնարավորությունները, չի չարաշահում իր պասիվ ընդրական իրավունքը, պարասխանարվությամբ է վերաբերում համապետական ընդրություններին եւ ունի ընդրողների գոնե ավելի քան 5 գույքու կողմից ակնկալվող մանդապն սպանալու վսպահություն, նույն կերպ պետք է վսպահ լինի, որ ընդրագրավը վերադարձվելու է եւ իր նյութական վիճակի վրա այն որեւէ ազդեցություն ունենալ չի կարող:

Վեճի առարկա հիմնախնդրի դեսանկյունից ուշադրության են արժանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դարպարանի իրավական դիրքորոշումներն ընդրագրավի ինսպիրութիւն վերաբերյալ, մասնավորապես՝ Սուխովեցկին ընդդեմ Ուկ-

բահնայի գործով /թիվ 13716/02, 28.03.2006թ./: Այս գործով վեճի առարկան դարձյալ եղել է ընդրական գրավի ինսպիրուտի իրավաչափությունը: Անդրադառնալով ընդրական գրավի վերաբերյալ Ուկրաինայի սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին /ընդհուպ վկայակոչելով նաև Հայաստանում ընդրական գրավի որոշման օրենսդրական կարգը/, ներկայացնելով դարբեր երկրների մովեցումները, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գործել է, որ:

- ընդրական գրավը կիրառվում է Եվրոպայի խորհրդի անդամ շաբ երկրներում եւ հետապնդում է իրավաչափ նպագրակ,
- այն չի հասցեագրված կոնկրետ անձանց եւ խորականություն չի ենթադրում,
- այն հանրային եւ մասնավոր շահերի ներդաշնակման միջոց է,
- դրա սահմանումը, չափի որոշումը երկրի օրենսդիր իշխանության հայեցողության սահմաններում է:

Վրդյունքում՝ Եվրոպական դատարանը հանգել է այն հետեւությանը, որ Կոնվենցիայի 1-ին Արձանագրության 3-րդ հոդվածի խախտում առկա չէ:

8. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ երկրում համապետական ընդրություններն առաջին հերթին հենվում են հասարակության քաղաքական կառուցակարգերի վրա: 2009թ. հունիսի 30-ի ՍԴՈ-810 որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «Կուսակցությունների մասին ցանկացած դասական սահմանում ելնում է այն ակնհայտ ճշմարգությունից, որ փվյալ միավորման գործունեության նպագրակը հասարակության եւ պետության քաղաքական կյանքին մասնակցելն է, քաղաքական իշխանության մաս կազմելը, քաղաքական պարասանագրություն սրանձնելն ու այն իրականացնելը: Անառարկելի է, որ չի կարող լինել ժողովրդավարական պետական համակարգ՝ առանց անհրաժեշտ քաղաքական կառուցակարգերի: Չի կարող լինել նաև հասարակական կայունություն՝ առանց կարողունակ քաղաքական ուժերի կողմից երկրի այսօրվա ու վաղվա համար ժողովրդավարական եղանակներով քաղաքական պարասանագրություն սրանձնելու: Կուսակցությունն իր հանրային առաքելությունը կարող է իրականացնել միայն այն դեպքում, եթե ոչ միայն ծրագրային ցանկություն, այլև անհրաժեշտ ու քավարար կարողունակություն ունի քաղաքական պարասանագրություն սրանձնելու համար, եւ դա գենասանելի ու գնահատելի է ընդրողի կողմից»:

“Սահմանադրության մակարդակով է ամրագրված կուսակցությունների սահմանադրական գործառույթը, այն է՝ **ժողովրդի քաղաքական կամքի ձեւավորմանն ու արդահայտմանը նպասգելը (7-րդ հոդվածի 2-րդ մաս): Իրենց այդ առաքելությունը կաբարելու համար կուսակցությունները ժողովրդի կողմից վսփահության քվե սփանում են բոլոր կարգի ընդունակությունների ժամանակ: Առավել եւս՝ Հանրապետության Նախագահի ընդունակությունների ժամանակ, եթե կուսակցությունները նախորդ ընդունակությունների արդյունքներով ու իրենց գաղափարախոսական-ծրագրային կողմնորոշումներով նախապես վասփակել են ժողովրդի վսփահության համապարասխան ասփիճան, ապա ժողովրդից պետքության գլխի մանդապ ակնկալող ինքնառաջադրվող անհարզ չի կարող միայն իր պասիվ ընդունական իրավունքի ուժով կուսակցությունների կողմից առաջադրված ու երաշխավորված թեկնածուների հետ ընթացակարգային միեւնույն պայմաններում գրանցվել որպես նախագահի թեկնածու: Այս հանգամանքը հաշվի առնելով է, որ պետքությունների մեծ մասում, որպես առկա է ինքնառաջադրման ինսպիրություն, նման հայր ներկայացնող անձը նախապես ձեւավորում է որոշակի թվով **ընդունակությունների խումբ** կամ **առաջադրող կոմիտե** /Ուսասարանի Դաշնություն, Սերբիա, Բուլղարիա, Լեհաստան եւ այլն/ թեկնածությանն աջակցելու համար:**

Սահմանադրական դարբարանը գրնում է, որ գարբերակների ընդունակությունը

“Ազգային ժողովի իրավասության հարցն է, սակայն պետքության ժողովրդավարական կառուցակարգերի բնականոն զարգացման շահերից ելնելով կարող է ընդհուպ դարբերակային մոփեցում դրսեւորվել ընդունակությունների ու սպորագրահավաքի ինսպիրությունների առանձին-առանձին կամ **համակցված կիրառման հարցում /ինչպես, օրինակ, Բուլղարիայում/՝ պառլամենտական խմբակցություններ ունեցող, այդպիսին չունեցող կուսակցությունների կողմից թեկնածուների առաջադրման ու ինքնառաջադրումների դեպքերում: Ի դեպ, ԱՄՆ գերագույն դարբարանը 1972 թվականին ըստ Էռիթյան իրավական դիրքորոշում է արքահայտել, որ նույնիսկ **անիրաժեշտ** է սպորագրահավաքի ու ընդունակությունների համակցված կիրառումը: Այսպիսի սահմանադրական դարբարանը նույնպես գրնում է, որ համադրելի չէ այն իրողությունը, եթե առանձին կուսակցություններ, որոնք արդեն իսկ ունեն ընդունակությունների 5 գոլկոսից ավելիի վսփահությունը եւ **ժողովրդավարական ընթացակարգերով** ու իրենց **երաշխավորությամբ** թեկնածու են առաջադրում, հայտնվում են հավասար վիճակում մեկ առանձին՝ հաճախ հանրությանը բացարձակապես անհայր ու առաջադրող խումբ, կոմիտե կամ այլ մարմին չունեցող անհարզի հետ: Միայն ընդունակությունը այս**

պարագայում կարող է նաեւ ոչ իր իրավական բնույթին համարժեք դերակարարություն ունենալ, քանի որ այն համեմատաբար քիչ թափանցիկ է ու որոշակի իրավական ու քաղաքական մշակույթի պակասի պայմաններում կարող է առանձին ուժերի կողմից քաղաքական պավունքի ու ոչ իրավաչափ գործընթացների վեղիք դալ:

Մյուս կողմից՝ ինչպես բազմից նշել են Եվրախորհրդի դիրքորդները /օրինակ՝ 2012թ. մարտին Ռուսաստանի Դաշնության նախագահական ընդունությունների արդյունքներով ներկայացված զեկույցում/ միայն սպորագրահավաքը նույնպես խնդիրներ է բովանդակում, երբ այդ հարցում հարկապես ընդդիմադիր թեկնածուների համար արհեստական դժվարություններ են սպեհծվում: Ժամանակին այս հանգամանքը շեշտադրվում էր նաեւ Հայաստանի քաղաքական ընդդիմադիր դաշտի կողմից: Այս ամենը հաշվի առնելով՝ հարկապես նոր ժողովրդավարության երկրների համար ցանկալի դարբերակն այդ երկու ձեւերի համակցումը կարող է լինել, երբ ինքնառաջադրման դեպքում կամ ընդունությունը առնվազն 5 դոկում քվեն չսպացած կուսակցությունների կողմից թեկնածու առաջադրելու դեպքում նախապես հավաքվելիք սպորագրությունների՝ օրենքով սահմանված պահանջը չի գերազանցում ընդունությունիցի թվի 1 դոկում, իսկ ընդունության «հետաքրքրությունից դրդված» առաջադրումը, այլև ընդունություններն ունենան դրա ձեւավորմանը որոշակի մասնակցություն՝ որպես ինքնառաջադրվողի նկարմամբ հանրային վարահության արգահայտություն: Տօգուր այդ դարբերակի է, մասնավորապես, վկայում նաեւ այն փասդը, որ 2013թ. ՀՀ Նախագահի ընդունության իրապարակված արդյունքներով թեկնածուների կեսը չհավաքեցին ընդունությունիցի ձայների նույնիսկ 1 դոկումը:

9. Սահմանադրական դարպարանը գվնում է, որ վերոհիշյալ իրավական դիրքորոշումների շրջանակներում դիմողի հղումները Սահմանադրության 6, 14.1, 43, 50 և 51-րդ հոդվածներին կամ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին՝ ակնհայտ անհիմն են: ՀՀ ընդունության օրենսգրքի ողջ 15-րդ գույքը, որով սահմանվում են Հանրապետության Նախագահի թեկնածուի առաջադրման իրավունքը և դրա իրացման կարգը, ընդունության գրավը, թեկնածուի գրանցման ու դրա ուժը կորցնելու կարգը, օրենսգրքի մյուս բոլոր դրույթների հետ մեկ միասնականության մեջ ներկայացնում է ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված պահանջի հիմքով նախագահի ընդունության՝ օրենքով սահմանված կարգը: Ի դեպ, երկրների գերակշիռ մասում սահմանադրահրավական համանման իրավակար-

գավորումների պայմաններում նույն օրենքով սահմանված կարգի շրջանակներում, այսպես կոչված, «զուր անձնական ցանկության վրա հիմնված» ինքնառաջադրում չի նախադրեավում: Սահմանվում է, որ պասիվ ընդունական իրավունքն իրացնելի է միայն կուսակցությունների, որոշակի թվով ընդունելի կամ պարզաբանվորների կողմից թեկնածու առաջադրվելու պայմանով:

Չնայած եվրոպական եւ այլ երկրների ընդունական օրինակների վկայակոչմանը, դիմողը, այդուհանդերձ, հիմնավոր կերպով չի ամրապնդում իր փաստարկները: Սահմանադրական դարձարանը գրնում է, որ իրոք գրավի «պահանջվող գումարը չպեսք է լինի չափազանց մեծ», ինչպես նշված է նաև Վենեպիկի հանձնաժողովի ու ԵԱՀԿ Մարդու իրավունքների եւ ժողովրդավարական հասքագործությունների գրասենյակի /ԵԱՀԿ/ԾՆՍԻԳ/ մոփեցումներում: Սակայն այն չի կարող լինել նաև «սիմվոլիկ»՝ կորցնելով իր իրավական իմաստն ու կանխարգելիչ նշանակությունը: Այս շրջանակներում համապատասխան գումարի չափի որոշումը Ազգային ժողովի իրավասության հարցն է եւ քննության առարկա գործի իրավական փաստարկների առումով սահմանադրականության խնդիր չի առաջացնում: **Դարձարանը միաժամանակ գրնում է, որ փվյալ համակարգը հեղագա օրենսդրական բարեփոխումների անհրաժեշտություն ունի՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ սահմանադրական դարձարանի կողմից արփահայփված իրավական դիրքորոշումները:**

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կերով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դարձարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դարձարանը **Ո Ռ Ո Շ Ե Յ .**

1. Հայաստանի Հանրապետության ընդունական օրենսգրքի 23-րդ հոդվածի 3-րդ մասը, 24-րդ հոդվածը, 38-րդ հոդվածի 7-րդ մասը, 79-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կերը եւ 80-րդ հոդվածը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՇՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

5 մարտի 2013 թվականի
ՍԴՈ-1076